


ՎԱՆՅԱ ԴԱՎԹՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌԵՎԱՏՐԻ
ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ



ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
● 1936

06 APR 2010

38(47)
Դ-23

ՎԱՆՅԱ ԴԱՎԹՅԱՆ

Դ

ԽՈՐՀՈՒԱՅԻՆ ԱՌԵՎԱՐԻ
ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ-ՖԲԸ Ժ

Հ52

Վ521



ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1936 թ.

29 MAR 2013

54.957

[View all products](#)

Պատ. Խմբ. Պ. Թորոսյան

Տեխ. Խմբ. Գ. Զենյան
Արքագրիչ. Հ. Մանուկյան

Հարատ. 3735, Գլաւ. լիազոր Վ-1113
Պատվեր 651, Տիրաժ 2000
Գետհրատի ապարան.
Ցերեան II գնունի, 4.

6397-56



ԽՈՐԴՐԴԱՅԻՆ ԱՐԵՎՏՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Համեկ (բ)կ Կենտվորմի և ԽՍՀՄ Ժողկումխորհի
1935 թվի սեպտեմբեր 29-ի վորոշումը՝ սպառողական
կոստերացիայի սիստեմի վերակառուցման մասին,
նոր ետապ ե բաց անում խորհրդային առևտրի զար-
դացման մէջ:

Դեռ առաջին հնդամյանի վերջերին իրագործվեց առանց կապիտալիստների, առանց սահկույյանտների խորհրդային առևտորի անցնելը։ Արանց սպեկուլյանտների խորհրդային առևտորին անցնելը, իրագործվեց սոցիալիստական եկոնոմիկայի չիմքի ավարտման, «ուղ—ում» պրոբլեմի թե՛ քաղաքում և թե՛ գյուղամ, թե՛ արտադրության և թե՛ շրջանառության մեջ վերջնականապես լուծվելու հիման վրա։

Այդ անցումը, սերտորեն կապված է ը շրջանառության մեջ կապիտալիստական տարրերին սահմանակալելու և արտադրելու լոգունդից՝ նրանց վերջնականապես արժատախիլ անելու լոգունդին անցնելու հետ :

Խորհրդային և կոռակելաստիվ առևտրական ապարատն այժմ ըստմ ընդգրկել է յերկրի ամբողջ ապրանքա-չքնանառությունը, ամբողջ առևտրական ցանցը։ «ՍԱ-

ցիալիստական տնտեսաձևն, անսահմանափակ իշխող և միակ իրամանատարական ուժն ե ծողովդրապահական ամբողջ տնտեսության մեջ» (ՍՏԱԼԻՆ) :

Տվյալ ետապում մեր առևտրի զարգացման մեջ նորն այն ե, վոր Խորհրդային յերկիրն առաջարկիմության խոր տեղաշարժեր ե կատարում արտադրողական ուժերի և աշխատանքի արտադրողականության վիթխարի աճման հիման վրա, նոր գործարանների գործարկման, գյուղատնտեսական արտադրության մեքենայացման և նոր տեխնիկայի յուրացման հիման վրա : Տեխնիկայի և նոր ձեռնարկությունների յուրացման չնորհիվ ծանր արդյունաբերության արտադրանքն աճեց 25%-ով, մասնավորապես 1935 թվին մեծ քանակությամբ լայն սպառման առարկաներ արտադրվեցին : Մասնաւոր յունաբերության արտադրանքը 1935 թվին աճեց 24,7%-ով :

Գյուղատնտեսությունը 1935 թվին հաջողությամբ կատարելով իր պլանները, 16 % արտադրանքի աճ ունեցավ 1934 թվի 5-6 տոկոսի դիմաց :

Այս բոլորն, անկասկած նշանակում ե, վոր Խորհրդադների յերկիրը դառնում է հարուստ, վոր նրանում ավելի ու ավելի առատանում են թե պարենային և թե արդյունաբերական ապրանքները :

Դրա համար ել խորհրդային առևտրի խնդիրն ե՝ յուրացնել մթերքների այդ առատությունը, ավելի ու ավելի մեծ քանակությամբ սպառողին հասցնել արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրած լայն սպառման ապրանքները և պարենամթերքները :

Դեռևս 17-րդ կուսկոնֆերանսն իր բանաձեկի մեջ մատնանշել եր, վոր ապրանքաշընառության ծավալումն անհրաժեշտ է ժողովրդական ամբողջ տնտեսության վերելքի բոլեկվիլյան տեմպն ապահովելու և քաղաքի ու գյուղի լայն մասամբերի՝ լայն սպառման ապրանքների պահանջները լավագույն կերպով բավարարելու համար : Ահա թե ինչու մեր խորհրդային առևտուրը տնտեսական ու քաղաքական խիստ կարևոր գործ է և ահա թե ինչու յուրաքանչյուր խորհրդային աղնիվ վաճառող և առևտրի կազմակերպիչ քաղաքական հսկայական նշանակություն ունեցող գործ է կատարում :

«Խնդիրը կայանում է նրանում, վոր ե՛լ ավելի ծավալել խորհրդային առևտուրը, այդ գործի մեջ ներգրավել տեղական արդյունաբերությունը, ուժեղացնել կալտնտեսային-գյուղացիական առևտուրը և նոր, վնասական հաղթանակներ ձեռք բերել խորհրդային առևտրի վերելքի գործում» : Ժողովուրդների առաջնորդ ընկ ՍՏԱԼԻՆի այն դիմակտիվը, վոր տրված ե կուսակցության 17-րդ համագումարում, պետք է հիմնաքար դառնա առևտրի աշխատողների հսկայական կոլեկտիվի աշխատանքում, աշխատողներ, վորոնք մեր ապրանքաշընառության եկոնոմիկայում վերջին ժամանակներս մեծ հաջողությունների յեն հսկել :

Մանրածախի ապրանքաշընառությունը 1933 թվին կազմում հասավ 43 միլիարդ ռուբլու, 1934 թվին 54,5 միլիարդ ռուբլու, իսկ 1935 թվին ավելի քան 73 միլիարդ ռուբլի, ըստ վորում 1935 թվի 9 ա-

Միսների մանրածախի շրջանառությունը 34%-ով գերազանցեց 1934 թվի շրջանառությունից։ Դրա հետմասին ընդարձակվեց առևտրական ցանցը, վորը 1931 թվի 185 հազար միավորից 1935 թվին հասավ 300 հազար միավորի։

Ժողովրդական անտեսության այս վիթխարի աճումը, վորը հնարավոր ե միմիայն Լենինի-Ստալինի կուտակցության զեկավարած պրոլետարիատի ղեկտատառայի իշխանության որոք, խորհրդային առևտրի որդանների առաջ պահանջ և զնում մեծ չափով բարձրացնել սպառողին սպասարկելու վորակը, բարձրավորեն բարձրացնել աշխատանքի տեմպը և բարելավել աշխատանքի կազմակերպչական մեթոդները։

Ապրանքաշրջանառության աշխատանքի կազմակերպչական վերակառուցման բարելավման գործում խոշորագույն գործոն ե հանդիսանում Համ Կ(ր)Կ կենտկոմի և ԽՍՀՄ ժողկոմիսորհի 1935 թվի սեպտեմբերի 29-ի վորոշումը՝ սպառողիկոն կոռուպտացիայի վերակառուցման մասին, կոռուպտացիա, վորն իր նըշանակությունն այժմս կորցրել ե քաղաքի աշխատավորական մասսաներին սպասարկելու դորժում։

Կուտակցության և կառավարության վորոշումը կոռուպտացիայի առաջ խնդիր և զնում գառնալ «Քաղաքի և գյուղի միջև արդյունաբերական ապրանքների հիմնական հաղորդիչը և ապրանքաշրջանառության կազմակերպման կարևորագույն ոլակը, ամբողջ ուշադրությունը կենտրոնացնելով գյուղական սպառողին սպասարկելու վրա»։

Սպառողական կոռուպտացիայի հիմնական խնդիրը

պետք է լինի—մի կողմից վերացնել այն ձեղքը, վորը կա կոլտնտեսային գյուղացիության հսկայական չափով աճած պահանջի և այն փաստական դրության միջև, վորի մեջ այժմ գտնվում ե գյուղի առևտուրը, իսկ մյուս կողմից դառնալ գյուղատնտեսական մթերքների մշտական մթերողը՝ մեր քաղաքներին մատակարարելու համար։

Յեթե մինչև այժմ գյուղատնտեսական մթերքների այսպես կոչված ապակենտրոնացված մթերումները, ժամանակավոր պայմանների բերումով, անմիջականորեն կատարում ելին իրենք՝ գործարանները, շինարարությունները և պետական այլ ձեռնարկությունները, մորոնք դրա համար իրենց լիազորներն ելին ուղարկում հարյուրավոր և հազարավոր կելումներով հեռու հատկապես նրանց հատկացված շրջանները, —առաջ այժմ արդեն մթերումների այդ մեթոդը վոչ մի կերպ չի համապատասխանում վոչ գյուղատնտեսական արտադրանքի արտգորեն աճող ծալալին, վոչ ել քաղաքների ապրանքաշրջանառության ընդհանուր վերելքին և բաց առևտրի ցանցի ծավալմանը։ Դրա համար ել այժմ մթերման աշխատանքը բացառապես դրվում ե մշտական մթերողի վրա, վորն ամուր կապերով անմիջականորեն կապված ե տեղական տնտեսության հետ և իր նյութական-տեխնիկական բազան և ստեղծում մթերումները ծալալելու համար։ Բնական ե, վոր այդպիսի մթերողները կարող են հանդիսանալ շրջապալուողմիությունները և գյուղկոռուպները։ Հայտնի յե, վոր այդ կազմակերպություններից շատերը, իրենց տնտեսական

թերաբեռնվածության պատճառով, անշահարեր եյին
և Հայկոպալ հարկադրված եք նոր աղբյուրներ գտնել
նրանց գեֆիցիտը ծածկելու համար: Մինչդեռ նրանց
մշտական մթերուներ դարձնելը, տնտեսապես կրեռ-
նավորի նրանց ու շահարեր կրարձնի նրանց աշխա-
տանքը:

Հայկոպալի խնդիրն ե նյութական-տեխնիկական
բազա ստեղծել (պահեստներ, տարա, լցնելու կետեր,
տրանսպորտային միջոցներ և այլն) մթերման աշխա-
տանքի համար, այլ կերպ գժվար կլինի ապահովել
աշխատանքի հաջողությունը:

Մյուս կողմէց մեր քաղաքներում մենք արդեն
պետառերի այնքան ամբացած ցանց ունենք, վոր
կարող ենք քաղաքային առեւտրի կազմակերպման խնա-
դիրը և քաղաքային բնակչությանն ապրանքներ մա-
տակարաբելը լուծել պետական առեւտրական կազմա-
կերպությունների շրջանակներում:

Դրանից յենելով Համկ(բ)կ կենտկոմի և Միու-
թյան Ժողկոմիսորհի վորոշումը Յենտրոսոյուդի և
նրա վողջ սիստեմի աշխատանքը կենտրոնացնում են
բացառապես դյուզի առեւտրի և մթերման վրա:

Այդ վորոշման հիման վրա քաղաքային կոռպերա-
տիվ առեւտուրն ամբողջությամբ հանձնված ե Պետա-
ռություններին: Թվերի լեզվով այդ նշանակում ե, վոր Հայ-
կոպի ամփոփ հաշվեկշռի համախառն գումարից,
վորը հավասար ե 90 միլիոն ռուբլու, մոտ 10 միլիոն
ռուբլի տրված և պետառակտորին: Բնդ վորոշ նշվում
է, վոր քաղաքներում պետառակտուրն այնպես պետք
է կազմակերպի, վար մթությունն ապահովվի նրա

ներսում: Այսպես, որինակ՝ Մոսկվայում, խոշորա-
գույն ունիվերսալ խանութները և պարենային խա-
նութները կարող են անմիջականորեն յենթարկվել
Ներքառժողկոմատին: միաժամանակ արդյունաբերա-
կան ապրանքների և պարենային ապրանքների ունի-
վերսալ առեւտրի խանութները կարող են պատկանել
Ներքառժողկոմատի համապատասխան միավորումնե-
տին, ինչպես որինակ «Գաստրոնոմին», «Բակալյա-
յին», «Գլազունիվերմագին» և այլն: Նույն ապրանք-
յին, «Գլազունիվերմագին» և այլն: Նույն ապրանք-
յին, մթերումների հետ, նրանից վերցված են (հացի
թիւնը, թեյի գործը) և արյել են Սննդարդյունաբե-
րիւնը, թեյի գործը և այլն:

Կոռպերատիվային կենտրոնը Մեթելայնելու հա-
մար այն բոլորից, ինչն անմիջականորեն կապված չե-
դյուղական առեւտրի յեկ զյուղատնտեսական մթերու-
մների մթերումների հետ, նրանից վերցված են (հացի
թիւնը, թեյի գործը) և արյել են Սննդարդյունաբե-
րիւնը ժողկոմատին: Հասարակակիցն սնունդից խո-
րության ժողկոմատին, հանձնված են Ներքառժողկոմատին,
իսկ փոքրերը՝ տեղական կազմակերպություններին,
նրանից վերցված ե նաև մերձքաղաքային տնտեսու-
թյունը, ըստ վորում խոչոր տնտեսությունները հանձ-
նված են Հողժողկոմատին և Խորհունտժողկոմատին,
իսկ մանը տնտեսությունները՝ տեղական գործկոմնե-
րին և մասամբ ել համապատասխան ճաշարաններին:
Կենտկոմի յեկ ժողկոմիսորհի վորոշումը բացի
այս կազմակերպչական վեցակտուցումից, մի շաբա-
միջոցառումներ են նշել դյուզական առեւտրական ցան-
ցը Փինանսապես առողջացնելու համար: Փոքր և բա-

շահայտորեն վնասաբեր կրպակները վերացնելու դու-
գընթաց անհրաժեշտ ե մեծացնել խոշորացված գյու-
ղական խանութիների ցանցը, վորոնք, ինչպիս գյուղա-
կան առեվտրի խոշորացման փորձը ցույց տվեց, աշ-
խատում են շատ ավելի շահույթաբեր կերպով։ Յեկ-
էսկապես, վուշ մի անհրաժեշտություն չկա, որինակ
կոստյոքի ըջանի Զառ գյուղում ունենալ բոլոր ապ-
րանքներ վաճառելու, բայց վերջ ի վերջո վոչինչ
չվաճառող կրպակ։

Յեկ ամենատարորինակն այն ե, վոր փոռպերա-
ցիան, որինակ՝ ամբողջ վեց ամիս ուշադրությունն
չերդարձնում Զառ գյուղում աղ բերելու վրա, մինչ-
դեռ յերեք կիլոմետր հեռու, Բաշ գյուղում, գյուղ-
սպառկոռպի պահեստում ահապին քանակությամբ առ
եր կուտակվել։

Գյուղական կրպակը պետք ե զրադիլի ամենալայն
սպառման ավլանքների առեվտրով, ինչպիս, որինակ,
լուցկու, կերոսինի, արխ, սպազիրոսի, մախորկայի,
թելի, ասեղի և այլն առեւտրով։ Այս բանը Հայկոռպին-
հնարավորություն կտա կենտրոնականացված կարգով
ուղարկողծել իր Փինանսական ռեսուրաները՝ յենթա-
ցրանային կենտրոններում բացված գյուղական խո-
չոր խանութիների միջոցով ավլանքաշրջանառու-
թյունն ուժեղացնելու համար։

Դա հնարավորություն կտա բարդ ասորտիմենտի
ավլանքներ բերել յեկ շահարեր դարձնել առեվտրի
աշխատանքը։

Բացի դրանից, վերստուդիչ աշխատանքի ուժե-
ղացման միջոցով հնարավորություն ե ստեղծվում

ուժեղացնել գյուղական ցանցի միջոցների վրա յեղած-
հսկողությունը, իսկ դա իր հերթին կվերացնի այն
համբակումները, վորոնք կան սպառողական կոռպե-
րացիայի առեվտրի ցանցում։

Հայկոռպի ավլանքաշրջանառության 1935 թվի
ալլանը քանակական ցուցանիշներով թեյել գերակա-
ռարված ե թե՛ գյուղի և թե քաղաքի գծով, սակայն
Հայկոռպը հառաջադիմական մեծ քայլ չի կատարել
շահաբերական աշխատանքի գծով։ Յեթե առ 1-ն հուն-
վարի 1935 թվի համբակումներն ու վատնումները
(ամփոփման հաշվեկշռով) կազմել են 904 հազար
ոուրլի, ապա 1935 թվի ընթացքում հայտնաբերվել ե
1,097 հազար ոուրլու համբակում և վատնում, վորից
985 հազար ոուրլի առեստուրի գծով (չբջանառու-
թյան 0,9%-ը)։ Ահա թե ինչու առեստրական կետերի
խոշորացման չնորհիլ կհեշտանա այդ չարագործու-
թյունների դեմ մղլող պայքարը և կմեծանա առեվ-
տրի կուտակումները։

1935 թվին գյուղկոռպների զուտ շահույթը կազ-
մել է 389 հազար ոուրլի, 1934 թվի 60 հազարի գե-
մաց։ Կուտակումների գծով կատարված այս հակա-
յական թոփչքը դեպի վեր բացատրվում ե նրանով,
վոր վերացվեցին 25 վնասաբեր գյուղսպակոռպներ,
վորոնց վնասը կազմում եր 343 հազար ոուրլի և պը-
լանները կատարելու գծով Հայկոռպի աշխատանքի
վորակի բարձրացմամբ։

Անդրյերկոմի և ՀԿ(թ)կ կենտրոնական կոմիտեյի քիչ շաբաթ վորոշումներով վերջ գրվեց այն յերեսույթին, յերբ գյուղկոոպների միջոցներից վերցվում ելին տեղական կարիքների համար:

Այդ վորոշումների հիման վրա Հայկոոպի վարչությունը մեծ պայքար ծավալեց առելտրական աշխատանքի վրա բարելավման և կուտակումները սոսորին ողակի ձեռքին պահելու համար, կուտակումներ, վորոնք մինչ այդ մասսամբ ծախսվում ելին կողմանակի կարիքների վրա:

Սակայն Հայկոոպը չկարողացավ ամբողջներ այդ հաջողությունները, վորովհետեւ նրա ցանցում դոյլությունն ունեցող վնասարեր զործունելութունն իր բայսաստիան գերը խաղաց և 1935 թվին: Միայն 1935 թվականի վնասները հասան 1,788 հազար ռուբլու, վորոնք դոյլացել ելին շրջապառկոոպմիությունների 298 հազար ռուբլի, գյուղկոոպների 343 հազ. ռուբլի, Քաղկոոպի 57 հազար ռուբլու և վարչության 1,090 հազար ռուբլու վնասից:

Այս բոլորի հետևանքով յեթե Հայկոոպը 1934 թվին, պլանով նախատեսված 2,256 հազար ռուբլի առելտրական շահույթի (2 տոկոս) փոխարեն փաստութեն 940 հազար ռուբլի շահույթ ունեցավ, ապա 1934 թվականի առելտրական շահույթը պետք է կազմեր 2,140 հազ. ռ., փաստորեն կազմեց 1,269 հազ. ռ.: Իսկ յեթե հաշվի առնենք, վոր գերիտորների պարտքը առ 1-ն հունվարի 1935 թվի կազմում և 6,933 հազար ռուբլի, իսկ առ 1-ն հունվարի 1936 թ. 09,377 ռուբլի, ապա պարզ կդառնա, վոր այդ շահույթի վորոնք

մասը, անկասկած, կկանովի կասկածելի գերիտորների կողմից և դա, իր հերթին, կիջեցնի Հայկոոպի ստանալիք աննշան շահույթի գումարը:

Մի շաբաթ գյուղկոոպներ, սիստեմատիկաբար թերակատարում են ապրանք ստանալու ու իրացնելու պլանը այդպիսի գյուղկոոպների ապարատները պահելու ծախքերը ծանր բեռ են գյուղական առելտրական ցանցի վրա: Դրա համար ել գյուղական առելտրական ցանցի վերակառուցումը պետք է կատարվի ապարատի աժանացման տեսանկյունով, վոչ անհրաժեշտ ողակների վերացման և ինչոր միավորների ստեղծման միջոցով, միավորներ, վորոնք ընդունակ կլինեն կատարելու ասլրանքացը շահուառության և մթերումների պլանները:

Հայկոոպի ցանցի վերակառուցման չնորհիվ մենք հասել ենք հետեւյալին՝ յեղած 113 գյուղկոոպներից, խոշորացման վարդով, վերացվել են 25 սակավաղոր և անշահարեր գյուղիուղաներ, վորոնց ամսական միջն շրջանառությունը 20 հազար ռուբլուց ցածր եր:

23 Մըաններում թողնկած և 88 գյուղկռոպ իւն գրջաններում կազմակերպված են Մըանային կոոպերատիվ միություններ: Այդ բոլորի արդյունքն այն է, վոր բոլոր 88 գյուղկոոպներն անցնում են ինքնուրույն վարկավորման:

Գյուղական 1095 կրպակներից վերակառուցման ժամանակ կար գյուղական 1014 կրպակ, վորոնցից լիկիդացիայի յին յենթարկվել 333 կառ: Լիկիդացիայի դործում նկատի յեւ առնված գյուղի հառավությունը գնողականությունը, սպառողի հարմարությունները և յուրաքանչյուր կետի շահարեր աշխատանքը:

Մի շարք հեռավոր վայրերում թուլյատրված և
կրպակ բաց անել կոլտնտեսությունների հետ պայմա-
նագրային հիմունքներով, այն պայմանով, վոր կոլ-
տընտեսություններն իրենց վրա վերցնեն ապրանքի
փոխադրման, չենքի վարձակալման և պահպանման
ֆախերը: Գյուղական կրպակների վերջնական ցանցը
հարատարված է 762 միավոր, այդ թվում 231 դիմա-
վոր, 443 հեռավորագույն, 25 հացի և 18 զանազան
մասնագիտացված կետեր:

Սահմանված ե տնտհաշվարկային խանութների
1936 թվի ցանցը 96 միավորով, այդ թվում 36 շրջա-
նային խանութներ, 7 շրջանային կուլտուրական ապ-
րանքների խանութներ, 45 գյուղական խանութներ,
10 գյուղական պարենային խանութներ, այս բոլորն
առ 1-ն ապրիլի 1935 թվին գործող 43 կետերի (այդ
թվում 31 շրջանային խանութներ, 3 շրջանային կուլ-
տուրական խանութներ, 16 գյուղական խանութներ,
և 5 գյուղական պարենային խանութներ) փոխարեն:

Այժմ արդեն տնտհաշվարկային սկզբունքով
գործում են 63 խանութներ. ըստ վորում հաշվառված
են առանձին շրջանների ապրանքաշրջանառությունը,
բարդ ասորտմենտի ապրանքներ ստանալու չափը,
վորի համար ել տեխնիկական կուլտուրաների շրջան-
ները ամենից ավելի շատ գյուղական խանութներ և
շրջանային խանութներ ստացան:

Բացի գրանից, բարդ ասորտմենտի ապրանքների
վաճառքը կատարվում է 46 հանդուցային-դիմավոր

կրպակներում, շրջանային խանութներից ամենից ա-
վելի՝ հեռավոր գյուղերում:

Մեծածախի գծով 5 շրջանային սպառկոռպմիու-
թյուններում վերականգնված են առևտրական ֆունկ-
ցիաները (Ն. Բայազետ, Ամասիա, Կոտայք, Աշտա-
րակ, Ախտա), մնացած 18 միություններում մեծածա-
խի շրջանառությունն ուժեղացվում է Հայկոոպի լիկ-
վիդացիայի յենթակա բազաների շրջանառությունը
կրծատելու հաշվին:

Գյուղկոոպի, վորպես ապրանքը գյուղին հասցնող
հիմնավաճան հաղորդիչի, ամբացման ուղիներն սպառ-
վում են մատնանշված վերակառուցմամբ և աշխա-
տանքի բուշէիկան տեմպի դեպքում Փինանսական-
տնտեսական եֆեկտը պետք է հսկայական լինի: Այն
բան կախված է նրանից, թե Հայկոոպը կկարողանա՞,
կիրառած միջոցառումների հիման վրա, ամենակարճ
ժամկետում վերացնել գյուղական առևտրի ճակա-
տում կտառարկող աշխատանքի հետ մնալը:

Հայկոոպի նոր ցանցի աշխատանքի պլանների հի-
ման վրա 1936 թվին իսկ անհրաժեշտ և անպայման
Փինանսական ամուր բաղա ստեղծել առևտրուր անող
և մթերող ցանցի համար: Ցանցի շրջանառու միջոց-
ների ամբողջ բացն առ 1-ն հունվարի 1936 թվի (ա-
ռանց առևտրական կառավարչության), Հայկոոպի
հաշիվներով, հասնում է 4,100 հազար ռուբլու: Այդ
բացը կարող է ծածկվել յեթե կառարկի կուտակման
ոլանը, վորը գոյանալու յե 2,300 հազար ռուբլու չա-
ռույթից, 520 հազար ռուբլու փայտակուտակումներից և
2,300 հազ. ռուբլու 8 տոկոսանի փոխառության իրա-
ցումից, դրան ավելացրած նաև պետքյուջեյի մասնա-
կի Փինանսակորումը:

Մինչեւ այժմ ըրջանառու միջոցների բացը ծած-
կում եր պետությունը։ Հայկոսակն այժմ բոլոր պայ-
մաններն ունի իր համար սեփական ըրջանառու մի-
ջոցներ կուտափելու և հրաժարվելու պետական դուռա-
ցիայից։ Միաժամանակ պետությունն ուժեղացնում է
իր Փինանսական ոգնությունը դյուրավառկուպները
վարկավորելու գծով։

Յեթե մինչև այժմ Պետքանիլը վարկավորում եր ամսական 50 հազար ռուբլուց վոք պակաս շրջանա-ռություն ունեցող գյուղապառկոռպակներին, ապա այժմ կվարկավորի ամսական 20 հազար ռուբլու շրջանա-ռություն ունեցող գյուղապառկոռպակներին, ինչպես նաև գյուղական խանութներին, այն պայմանով, վոր նրանց աշխատանքը լինի շահավետ։ Պետքյան այդ լուրջ Փինանսական ողնությունը հսկայական ֆակտոր է ապրանքաշրջանառության ծավալման պլաններն ըն-դունելու և կատարելու համար։

Յանցի վերակառուցումը, շրջանառության ծախս-
քերի կրծատումից բացի, Հայկոսպին հնարապոլու-
թյուն և տալիս ուժեղացնելու հրահանդչական և վե-
րաստուգման աշխատանքները, իսկ ամենագլխավո-
րը, — հնարապորություն և տալիս կազմակերպելու
կազմերի պատրաստումը, վորոն առանձնապես կարե-
զոր և կոռպակերացիայի համար։ Այդ մեծածալված ապա-
շատի աշխատանքը պետք է վերակառուցել վերելից
մինչև ներքեւ, պետք է հասնել այն բանին, վոր
Հայկոսպն իրոք դառնա գյուղական առևտորի և մը-
թերուաների կազմակերպելու, վորովհետեւ կուսակցու-

թյան և կառավարության վորոշումը բոլոր պայմաններն ստեղծում է, վորապեսի սպառողական կոպերացիայի սխալնեմի աշխատանքը հասցվի տնտեսական-քաղաքական բարձր մակարդակի:

Քիչ հարցեր չեն դրվում նաև Պետական Բանկի
սկզբեմի առաջ :

Սեփական շրջանառու միջոցների մասնակցությունը առևտրական շրջանառության մեջ—կարելու բազույն սկզբունքներից մեկն է, վորս դրված է առևտրական կազմակերպությունները վարկավորման փոխադրելու մասին 1933 թվի սգոստոսի 16-ի որենքի հիմքում :

Կուտակցության և կառավարության վերջին վորոշումը վոչ միայն չի վերացնում ոգոստոսի 16-ի ուժենքը, այլ ընդհակառակը, նոր պայմաններ և ստեղծում մեր խորհրդավային առևտորի շահաբեր գործունեցությունն ուժեղացնելու համար։ Խորհրդավային առևտորի հետագա ծավալումից բղինող նոր յերելույթների կապակցությամբ, ինչպիսի ուղղումներ ել վոր պահանջի առևտորական ցանցի կազմակերպչական նոր վերակառուցումը, — սեփական միջոցների մասնակիցության ակդրունքն առ այժմ մնում է անփոփոխ։



նակ : Այդ մինիմումն անհրաժեշտ , վորպես պայման
Պետական Բանկի վարչակալուման , վորպես յուրա-
քանչյուր առանձին առևտրական կազմակերպության
վարկավորելու ժամանակ , բանկային վարկերի վերա-
դարձն անպայման ապահոված լինի :

ԱՊՐԱՆՔԱՅՐՁԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄԸ

Ֆինանսների պլանավորման գործում մեր յեր-
կիրը հսկայական հաջողությունների յե հասել : Ֆի-
նանսական պլանի միասնությունը՝ դա խորհրդային
տնտեսության աժխտելի նվաճումն է : Այդ հաջողվեց
ֆինանսական սիստեմի առանձին ողակները արագորեն
զարգանալու և վերակառուցվելու չորհիվ : Վարկա-
յին սիստեմը դա մեր ֆինանսական տնտեսության ա-
մենաբարդ ճյուղն է : Այդ սիստեմի միջոցով Պետ-
րանկը սերտորեն կազմած և ապրանքաշրջանառու-
թյան հետ : ՆԵՊ-ի առաջին տարիներում , յերբ մաս-
նավոր շուկան իրենից մեծ ուժ եր ներկայացնում ,
իսկ ապրանքաշրջանառության պլանավորումը դեռ
չստ թույզ եր , բանկը կիրառում եր հիմնականում
վարկային աշխատանքի հին ձևերը :

Պլանավորումը համարյա թե բոլորովին չեր չո-
շափում վարկային աշխատանքները , իսկ վարկային
հիմնարկությունների ցանցն անկազմակերպ եր ա-
ճում : ՆԵՊ-ի սկզբում վարկի պլանավորումը դժվար
եր , քանի վոր դրամական տնտեսությունն այն ժա-
մանակ գտնվում եր միանդամայն քայլայիշած սիճա-
կում , վորովհետեւ իմպերիալիստական և քաղաքա-
ցիական պատերազմը խախտեց և կործանեց դրամա-
կան սիստեմը : Փողը կորցնում եր իր արժեքը այն-



պիսի սըընթաց արագությամբ, վոր հնարավորություն չկար և նրա վրա կայուն տնտեսական պլաններ կառուցել:

Հիմա մենք արդեն այնքան հեռու յենք դնացել սոցիալիզմի ձանապարհով, վոր դրամական ձեզ կարող ենք վորակել վորպես խորհրդային պլանի զենքը: Հենց դրանով ել վորոշվում ե փողի, վարկի և տնտեսական հաշվարկի հսկայական գործնական նշանակությունը:

Մեր սոցիալիստական տնտեսության բուռն վերելքի, մասնավորապես ապրանքաշրջանառության աճման տարիներում, մենք ահադին պարձ ենք կուտակել ապրանքաշրջանառության վարկավորման հարցի չուրջը:

Վորքան ավելի ճիշտ կկատարվեն ապրանքաշրջանառության վարկային ուսուցչություն ներդրումները, այնքան ավելի նշանակելի չափով կարող ե արագանակ ապրանքաշրջանառությունը և այնքան ավելի առաջնական ավելի հաստատված կլինի բանկային վարկերի վերադարձը:

Առևտրի և բանկի աշխատողներն արդեն վաղուց դժուեն, վոր ապրանքաշրջանառության վարկավորումը, տարբերվելով տնտեսության մյուս ճյուղերի վարկավորումից, կատարվում է յերկու ձևով, այն եւ ապրանքային ապահովության դիմաց տրվող վարկի ձևով, վորի նպատակն է միանիագ վարկով լրացնել առևտրական կազմակերպությունների պակասող սեփական շրջանառու միջոցների նորմատիվ չափը, իսկ վարկավորման մյուս ձեռքներու լրացվում է շրջանառու միջոցների այն պակասը, վորն

առաջ ե յեկել ապրանքաշրջանառության չափերի որոշմից այն ժամանակաշրջանի ապրանքաշրջանառության համեմատությամբ, վորից յելնելով հաշված է յեղել ավագալ առևտրական կազմակերպության շրջանառու միջոցների նորմատիվ չափը:

Առաջին ձեր վարկի նորմատակը կայանում է նրանում, վորպեսզի 1933 թ. որենքով սահմանված վարկավորման նոր կարգի կիրառմանը անցնելու հետմահման ապահովմած լինի առևտրական կազմակերպությունների կայտանքությունների միջոցների միջոցների միջոցամարդ ուժումների մինիմալ գումարը և ուժեղանա բանկային վերահսկողությունների այնպիսի ողտադրժման նկատմամբ, վորը պետք է կատարվի առևտրական սիստեմի սեփական շրջանառու միջոցների լրացման և ուժեղացման ուղղությամբ:

Առևտրական կազմակերպությունների վարկավորման նոր ձերին անցնելը ցայտում կերպով դրսելորեց վարկի այդ ձեր անհրաժեշտությունը, վորը արդեն համարյա մարմած է:

Իսկ ինչ վերաբերում է վարկի յերկրորդ ձերին, այն արվում է առևտրական կազմակերպություններին ապրանքաշրջանառության պլանը բարձրացնելու դեպքում, ուստի այդ ձեր վարկը նույնպես չի կարող տրվել ժամկետանց պարտքերի պայմաններում, վորովհետեւ վարկն այդ գեպօպամ կդորձադրվեր վոչ թե ապրանքներ ձեռք բերելու, այլ առևտրական կազմակերպության ճեղքածքների ծածկելու համար:

Վարկավորումը կատարվում է Բանկի կողմից վորոշված լիմիտների սահմաններում: Այն դեպքե-

բում, յերբ ապրանքաշրջանառության պլանի գերակատարման կամ անհամաշխափորեն կատարման հետեւ վանքով առևտրական կազմակերպությունն արտադիմիտային վարկի կարիք ե զգում, բանկի բաժանմունքը պարտավոր է համապատասխան չափով բարձրացնել վարկավորման լիմիտը:

Սակայն այստեղ վերապահորեն պետք է նկատել, վոր վորոշակիորեն սահմանված լիմիտների առկայությունը գեռես չի նշանակում, թե Բանկը բոլոր գեղքերում անխափի կարող է վարկ տալ հատկապես հենց այդ լիմիտների չափով: Վերահսկողությունը ուուրելու միջոցով այստեղ արտահայտվում է նրանով, վոր Բանկը վարկ է տալիս լիմիտի սահմաններում միայն այն չափով, վոր չափով կատարվում է ապրանքաշրջանառության և կուտակման պլանը: Բանկին իրավունք ունի ստուգելու ապրանքային մեացորդները և իր հաճախորդների անբարեխողնության դեպքում կարող է դադարեցնել վարկավորումը և հարց հարուցել պարտապանների ապրանքանյութեղեն արժեքները վաճառքի հանելու մասին, վորովհետեւ Բանկին որենքով արգելված է ծածկել ինչպես առևտրական կազմակերպությունների, նույնպես և առանձին ձեռնարկությունների տնտեսական պլաններում դոյացած ճեղքվածքները:

Այս պարզ ճշմարտությունն անհրաժեշտ է, վոր յուրացնի բանկային աշխատողների կողեկտիվը, վորի առաջ կուսակցությունը և կառավարությունը խնդիր են դրել ամրացնել մեր սուբյեկտ արմատավորել տնտեսչվարկի սկզբունքը մեր տնտեսության մեջ:

Բանկի բաժանմունքները պարտավոր են իրագործել վերահսկողությունն այդ խնդրի նկատմամբ, վորապես ապրանքների վճանառության պլանային նորմաները չգերազանցեն շրջունակության փաստացի նորմաներին, այլապես այդ դեպքում բանկային վարկը կծառայի ավելացրդ ժամանակի համար: Այդ նպատակով, յերբ փաստացի շրջունակությունն արգանցել է պլանային նորմաների համեմատությամբ, Բանկը համապատասխանությունը կրամատում է վարկերի ժամկետները: Սակայն անհրաժեշտ է նախադրությունների Բանկի պլանային աշխատողներին, վոր այդ միջոցին կարելի յերբեք միայն այն դեպքերում, յերբ շրջունակության փաստացի ժամկետների կրամատումը կայուն բնույթ է կրում, այլ վոչ թե արդյունք է մի վորեւ պատահական, կարծատև գործառնության:

Ապրանքաշրջանառության վարկավորման գործում չափազանց մեծ նշանակությունն ունի վերահսկողության ձիւմ կազմակերպումը՝ ապրանքների շրջանառության պլանային ժամկետները պահպանելու նկատմամբ, ապրանքաշրջանառության մեջ տուելը բանկան կազմակերպությունների սեփական միջոցները պահպանելու նկատմամբ, ինչպես նաև վերահսկողությունն այդ ուղղությամբ, վորպեսզի բանկային վարկին ապահովված լինի համապատասխան ապրանքանյութերում արժեքներում:

Բացառիկ նշանակություն ունի ապրանքաշրջանառության վարկավորման գործում առևտրական կազմակերպության հաշվեկշռի վերլուծությունը, վորովհետեւ միայն հաշվեկշռը կարող է ցույց տալ, թե

Վոր Հակոբի և առևտրական կազմակերպությունը
ստահլանում 1933 թ. դպրուսով 16-ի որենքի հիմնա-
կան պահանջները:

Այն դեպքերում, յերբ վարկավորվող առևտրա-
կան կազմակերպությունը յերեք ամիս շարունակ վը-
նասարբեր է աշխատում, նաև պետք է հանվի առաջան-
քաւշը անառության վարկավորումից: Այդ մասին ան-
հապաղ տեղեկություն է տրվում վերադարձ առևտրա-
կան կազմակերպություններին և տեղական դեկավար
որդաններին:

Պետրանկի կողմից կիրառվող վարկային ներ-
գործման միջոցների մեթոդներն ու կարգը այն նր-
ուատակին են հետապնդում, վորպեսզի իրագործվի
կազմակերպության սեփական չքանառու միջոցների
կուտակումը և բանկային վարկի վերադարձը: Ուստի
այդ սանկցիաները պետք է կիրառել վճռականորեն,
առանց ճնշվելու:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՌԴԵՐԱՑԻԱՅԻ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄԸ

Ի դարձացումն Համբկ(բ)կ կենակոմի և ԽՍՀՄ
Ժողկոմիորհի 1935 թվի սեպտեմբերի 29-ի վորոշ-
ման, Աշխատանքի և Պաշտպանության Խորհուրդը
նոր վորոշում ընդունեց գյուղապահուպների վարկա-
վորման կարգի մասին:

Այդ վորոշմաք գյուղապահուպները և գյուղա-
կան խանութները կարող են վարկավորվել Պետրանկի
կողմից, յեթե նրանք ունենան ամսական 20 հազար
ռուբլուց ավելի փաստական չքանառություն, յերբ
վերջին յերեք ամսվա ընթացքում անվնասարեր յե-
ղած լինի նրանց աշխատանքը և յերբ նրանք սեփա-
կան չքանառու միջոցներ ունենան ապրանքային
մնացորդների արժեքի 20-25 տոկոսից վոչ պակաս:

Դրա հետ միասին, գյուղապահուպներին և գյու-
ղական խանութներին վարկավորելու ժամանակ, թուշ-
լատրված է Պետրանկի բաժանմունքներին յեւամ-
ոյակի ընթացքում ժամանակավոր փոքր չեղում
կատարել գյուղկուպների և գյուղագյուղական խանութների-
սեփական չքանառու միջոցների չափից. սակայն
յեթե այդ չեղումը սիստեմահիկ բնույթի կրի, առա-
Պետրանկի բաժանմունքը պարտավոր և գաղաքեցներ
վորակավորումը և անհապաղ զբաղվել գյուղկուպների
սեփական չքանառու միջոցների կրծառման պատ-

ճառների Խւսումնասիրությամբ, աղջանշանելով այդ մասին համարատասխան դիրքելումիվ որդաններին:

Սեղոնային ապրանքների ներմուծման ովերացիայի համար Պետրանկը վարկ է տալիս հատուկ պայմաններով, չպահանջելով համապատասխանաբար մեծացնել գյուղինուպների և գյուղական խանութների սեփական շրջանառու միջոցները:

Գյուղսպառկոռպների և գյուղական խանութների վարկավորումը կատարվում է այն չափով, ինչ չափով անհրաժեշտ է սեփական շրջանառու միջոցների սահմանված նորմատիվից բարձր ապրանքաշրջանառության համար:

Բացի դրանից, Աշխատանքի և Պաշտպանության Խորհուրդը Պետրանկի բաժանմունքներին պարտավուրեցրել ե, ուշադիր կերպով ստուգել գյուղկոռոպի կամ գյուղական խանութի ֆինանսական դրությունը՝ վերջին ինվենտարիզացիոն հաշվեկշռով, իսկ ամենհրաժեշտ գեղքերում տեղում անմիջականորեն ծանրթանալով գյուղապառկոռպի կամ գյուղական խանութի աշխատանքի դրության հետ: Այդ նշանակում ե, վոր Պետրանկի աշխատողը պետք է մոտ կանգնի գյուղում առելուր անող կազմակերպությանը և ավելի վասչդիտենա, քան բուն առելորի աշխատողը:

Գյուղսպառկոռպները և գյուղական խանութները վարկավորելու ամբողջ աշխատանքը պետք է կայուցված լինի այնպես, վոր գյուղական առելուրական շանցը մոտեցվի ապրանքաշրջանառության ծավալմանը և աղատվի մնասաբեր գործունեյությունից:

Դրա համար ել ԱՊԽ-ի վորոշումը Պետրանկի բաժանմունքին թույլ է տալիս գաղարեցնել գյուղկոռպի կամ գյուղական խանութի վարկավորումը, յեթե այդպիսիք մի քանի ամսվա ընթացքում վնասով են աշխատում: Այդպիսիների հետագա վարկավորումը հնարավոր է իմիայն Պետրանկի Հանրապետական Գրասենյակի թույլտվությամբ:

Բացի դրանից, ԱՊԽ-ն սահմանել է նաև գյուղսպառկոռպների և գյուղական խանութների հաշվարկման նոր ձևեր-ները շրջանային գնումների ժամանակ՝ հաշվարկային չեքեր կամ վճարման հանձնարարություններ, իսկ արտաշրջանային գնումների ժամանակ՝ սկզբանում, ակրեդիտիվ կամ բանկի կողմից ակցիաված չեք. գյուղսպառկոռպների կամ գյուղական խանութների հաշվեկշռի ակցիավածի ժամկետը սահմանված է 4 որ առանձին գյուղսպառկոռպների կամ գյուղխանութների համար, Պետրանկի Հանրապետականությունների համար, Վերկրամասային կամ Մարզային գյուղենրանկան, Յերկրամասային կամ Մարզային գյուղենրանկան, առելուրական նոր շանցի Փինանսական դրությունն ամրացնելու նորանումիվ:

Դրանից յենելով Պետական հանկի բաժանմունքները պետք է ոգնեն սպառկոռպերացիային՝ նորմատիվների նոր հաշվումների, շահաբեր աշխատանքի հայտաբերման և դեբիտուրացիային ամրացնելու նոր շանցի Փինանսական դրությունն ամրացնելու նորանումիվ:

Կուսակցության և Կառավարության կողմից ներկայում մեր առաջ դրված խոչընթափույն քաղաքա-

կան նշանակություն ունեցող խնդիրներից մեկը՝ դա գյուղական առևտրական ցանցի աշխատանքի բարձրացման խնդիրն է։ Անհրաժեշտ է, վոր բանկային աշխատողներն ել իրենց հերթին ամենալուրջ կերպով ձեռնարկեն այդ վորոշումների մշակմանը և նրա կինսագործմանը, վորպեսզի ինչպես քաղաքում, նույնպես և գյուղում լրիվ չափով և ճշտորեն ապահովվի ապրանքաշրջանառության ֆինանսավորումը, վորը համուշանում և մեր յերկրի դրամաշրջանառության հիմքը։

Կուսակցությունը դիրեկտիվ ե տվել մեր դրամական սիստեմն ամրացնելու մասին. քարտային սիստեմի վերացմամբ և խորհրդային բաց առևտորի անցնելով, նոր պայմաններ են ստեղծվում խորհրդային ռուբին ել ավելի ամրացնելու համար։

Մեր սոցիալիստական տնտեսության մեջ արտադրվության ու կուտակման, Փինանսական - ու դրամարկային պլանների կատարման համար, կայավճարների, փոխառությունների և խնայդրամարկղի համար մղվող պայքարը—պայքար և մեր չերվոնեցի՝ աշխարհում միակ կայուն վայրութայի ամրացման համար։

Մեր չերվոնեցի Փունկցիաներն արմատապես ստարքերմում են կապիտալիստական փողի՝ Փունկցիաներից։ Յեթե կապիտալիստական փողերի գոյությունն ու գործունեյությունը պայմաններ են ստեղծում կապիտալիստական տնտեսության հակասությունների հետագա աճման համար, ապա Խորհրդային դիոդի Փունկցիաներն ու դերը կարեվորագույն

դրվծոն են հանդիսանում դասակարգային հակասությունների ու դասակարգերի վոչչացման համար՝ արտադրության լիակատար հանրայնացման հիմանվար։

Մեր փողի Փունկցիաները ոժանդակում են սոցիալիզմի ածճն. դա նշանակում է, վոր վերջին հաշվով, սոցիալիզմի կառուցման հետ գուգընթացը իրենց մեջ պարունակվում են իրենց վոչչացումը։ Սակայն տվյալ ետապում ամենից առաջ պետք ե մտածել Խորհրդային փողն ոգտագործելու անհրաժեշտությունը, ոռուբլու միջոցով կատարվող հսկողությունն ոժեղացնել և ոռուբլին ամրացնելու անհրաժեշտության մասին։

ՀԱՅՎԱՐԴԻՄԸ ՅԵԼ ՀԱՅՎԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂԻ ԴԵՄՔԸ

Հաշվառման խնդիրը և նրա կաղմակերպումը՝ յերկրի սոցիալիստական վերակառուցման ներկա վիթխարի պրոցեսում, կարևոր նշանակություն է ստանում:

Հաշվառման մասին արտահայտվել են բանկորդասակարգի լավագույն ուսուցիչները։ Դեռ Մարքսի ասում եր, վոր՝ «Արտադրության կապիտալիստական յեղանակի վոչնչացումից ինտո, հանրային արտադրությունը պահպանելիս... հաշվապահությունն ավելի կարևոր ե դառնում քան յերբեքից»։

Մենք գտնվում ենք սոցիալիզմի շրջանում։ Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում անհանդինթաց շինարարություն և կատարվում, սոցիալիստական միասրարության վանդակառությամբ համակել են տասնյակ միլիոնավոր կոլտնտեսականներ։ Մեր տնտեսության պլանավորումը ավելի ու ավելի խոր ու բարձրակողմանիորեն և ընդուրկում ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը։

Ընկեր Լենինը տվյալ և կլաստիկորեն հստակ ու սպառիչ Փորմուլա, վորը ճշգրիտ վորոշում և հաշվառման նշանակությունը սոցիալիզմի ժամանակ, — «Սոցիալիզմը դա հաշվառում ե»։

Ճիշտ հաշվառում ու հաշվետվությունն կազմակերպելու անհրաժեշտության հարցը նույնակես հըստակ ու շեշտակի դնում և սոցիալիստական շինարարության մեծ վարպետ ընկեր ՍՏԱԼԻՆԸ, — «Վոչ մի շինարարական աշխատանք, վոչ՝ մի պետական աշխատանք, վոչ մի պլանային աշխատանք անհնարին ե առանց նիշտ հաշվառման»։

Հակայական Վոլեկտիվի համաձայնեցված աշխատանքի անհրաժեշտությունը, առանձին հաշվառմանական ժամանակում ժամանակին միջամտելու վարիչը պահանջում ե հաշվառման այնպիսի միազմակերպում, վորը իր ժամանակին ապահովի հստակ, ճշգրիտ հաշվային տվյալները։

Դրա համար ել կուսակցությունը, անձամբ ընկեր Ստալինը մեծ ուշադրություն են դարձնում սոցիալիստական հաշվառման բարելավմանը և նրա որդանների ամբազնումանը։ Հաշվառման որդանների աշխատանքը պետք է կատուցված լինի հարցի կուսակցական—քաղաքական ըմբռնման և պլուտոսարական պետության շահերի պաշտպանման վրա։ ԽՍՀՄ-ի վիճակադրության պատմությունը չատ որինակներ գիտի, յերբ դասակարգային թշնամին և նրա գործակալությունը փորձում ելին հաշվառման տըզիցրի աղավաղման միջոցով փոխել կուսակցության քաղաքականությունը։

Դրա համար ել հիմնական խնդիրն ե պայքարել՝
ճշգրիտ բալանսի համար, վորը պետք է ճիշտ կողմու-
րոցի գործերի իրական դրությունը և արտացոլի
ձեռնարկության ու տնտեսական կարգակերպության
գործունեյությունը։ Ճիշտ թվի համար մղվող պայ-
քարը դասակարգային պայքար է, քանի վոր խեղա-
թյուրումները կատարվում են առաջին հերթին, գոր-
ծերի իրական դրությունը խեղաթյուրելու նպատա-
կով՝ դասակարգայնորեն խորթ տարրերի մնացորդ-
ների կողմից, վորոնք չահարդուված են տապալելու-
սոցիալիստական շինարարությունը։

Այս խնդիրները մենք կարող ենք լիլանքում
կենսագործել միայն այն ժամանակ, յերբ Խորհրդա-
յին կուլտուրայի մյուս ճյուղերի հետ միասին, կա-
րող կլինենք ճիշտ տղագործել նաև սոցիալիստա-
կան հաշվառման կուլտուրան, յերբ կենդանի մարդիկ,
մեր հաշվապահական կաղըրերը, ակտիվորեն մաս-
նակցեն սոցիալիստական հաշվառման ամենորյա վե-
րելքին։

Խորհրդային հաշվառումը արտադրության և
բաշխման նկատմամբ աշխատավոր մասսաների բա-
ցահայտ, մատչելի վերահսկողության միջոցն ե։
Խորհրդային տնտեսության մեջ հաշվառումը պետք
է պարզ, հստակ ու հստանալի լինի ամբողջ աշխա-
տավոր ժողովրդի համար։

Ժողովուրդների առաջնորդ ընկ. Ստալինի խոս-
քերը՝ «Կաղըրերն են վորոշում ամեն ինչ», ամբող-
ջությամբ վերաբերում են նաև հաշվառման աշխա-
տողներին, մեր հաշվապահական կաղմի կենդանի

մարդկանց։ Ընկ. Որզոնիկիձենն իր յելույթի մեջ
պարզորու բնութագրեց հաշվապահների գերը անտե-
սության մեջ։ Սակայն հաշվային կաղըրերի դերի
բարձրացման ասպարիզում մենք առանձին տեղերում
գեռես ունենք թերագնահատման մի շարք դեպքեր ո
վորոնք բացասարար են անդրադառնում հաշվային
աշխատողների պատասխանատվության բարձրացման
վրա։

Մեզ ծանոթ են այնպիսի փաստեր, յերբ գործա-
րանների, ֆաբրիկաների դիրեկտորները հաշվապա-
հության վրա նայում են ինչ վոր մի կցորդ բանի
վրա, վորն, հաճախ «իրանգարում ե» նրանց աշխա-
տել այնպես, ինչպես իրենք են ցանկանում (առանձ-
նապես յերբ վորեւ անողինական ոպերացիա յե կա-
տարվում)։

Այդ տեսակետից գաստիարակիչ և Մարմարէ
գործարանի պրակտիկայից վերցված որինակը, վոր-
տեղ գործարանի դիրեկտորի անօրինական կարգա-
դրությունները հաշվապահի կողմից չկատարելու հա-
մար, նրա շուրջը ստեղծվել եր վատառողջ մթնո-
լորտ, վորի պատճառով ել նա փաստորեն հանվեց
աշխատանքից։

Կամ թե վերցնենք Ստեփանավանի շրջապառկոոպ
միությունը։

Գլխավոր հաշվապահը, աղդանշանում ե սպառ-
կոոպերացիայում յեղած կոմբինացիաների մասին։
Սպառկոոպմիության նախապահն ու նրա տեղակալը
կարողացել են անորինական ծախսեր կատարել։ Այդ
իսկ պատճառով գլխավոր հաշվապահը դեկամարու-

Թյան կողմից յենթարկվել ե խիստ հալածանքի այդ առաջնինի ծախսերի դեմ իր միանդամայն որինական միջոցառումների պատճառով:

Մինչդեռ հաշվային կարգապահությունը և գլուխավոր հաշվապահների պատասխանատվությունը բարձրացնելու համար ԽՍՀՄ ժողկոմիորհը դեռ 1932 թվին հատուկ վորոշում հրատարակեց: Անհրաժեշտ է սակայն մատնանշել, վոր գլխավոր հաշվապահներից վորանք չեն ոգտվում այդ իրավումներից, չուցանականալով «գ ժ տ վ ե լ» իրենց ղեկավարների հետ:

Հայտնի յն, վոր տնտեսության նկատմամբ վերահսկողության միակ միջոցը հաշվառումն ե, ժամանակին աժուրի բերված և ճիշտ կազմած հաշվեկշռը: Վարկային ռեֆորմի կիրառումից հետո, յերբ անհրաժեշտ ե ոռություն միջոցներու ստուգել արտադրության և կուտակման պլանները, հաշվեկշռը դառնում ե լավագույն հայելի, վորը ցույց պետք ե տա ամրող տնտեսության խփական դեմքը:

Հաշվառման և հաշվային կադրերի հարցերը, սոցիալիստական տնտեսության աճման դուգընթաց, ամենակուտալ նշանակություն են ստանում: Տնտեսության մեջ հաշվապահը պետք ե նիշտ քվի միակ պատասխանառուն լինի, իսկ դրան համելու համար, պետք ե տնտեսությունների ղեկավարները դիտակցեն գլխավոր հաշվապահների հեղինակությունը ամուր պահպանելու անհրաժեշտությունը:

Առանձնապես պետք ե կանգ առնել միջդրասենյակային հաշվարկների վրա (МКР): Այդ հաշվել:

Վորը նույն ձեռնարկության տնտեհաշվարկային միար վորների փոխադարձ հաշվարկներն արտացոլելու նըլպատակն ունի, մեր հաշվային աշխատողները, մեղմ արտահայտված, աղքանոց են դարձրել:

Միջդրասենյակային հաշվարկները վարելուն պետք ե առանձնահատուկ ուշադրություն դարձնի: Պետք ե հասնել այն բանին, վոր միջդրասենյակային հաշվարկներով անցնող ներսիստեմային հաշվարկները հստակորեն արտացոլեն առանձին տնտեհաշվարկային միալորների փոխադարձ հաշվարկումները, վորպեսզի այդ կազմակերպությունների հաշվը բացառի փորձե կոմքինացիայի կամ խարդախության հնարավորությունը: Միջդրասենյակային հաշվարկների հաշվեկշռը պետք է կանոնավոր համքի վրա զնել, գեկատային հաշվեհարդար կատարելու միջոցով:

Հաշվառման և հաշվետվության գործը լավ դրության մեջ չե նաև այնպիսի ճյուղավորմած տնտեսության մեջ, վորպիսին մեր սպառկոռպերացիան ե տ

Բասարգեցարի ընանային սպառկոռպմիությունում, հաշվապահի տեխնիկական միջդրագիտության պատճառով, առ 1-ն հունվարի 1934 թվի և առ 1-ի ամբողջի հաշվեկշռների ակտիվին ու պատիճն իրար չելին համապատասխանում: Մարտունու շրջապառկոռպմիությունում մինչև վերջին ժամանակներս 1934 թվի և առ 1-ն ապրիլի 1935 թվի ստուգմած բեզրափակիչ հաշվեկշռի չկար:

Այս փաստերն ապացուցում են, վոր մենք դեռ տնտեսական որգաններ ունենք, վորոնց ղեկավարները դեռ բավարար չափով չեն համացել հաշվառման

Նշանակությունն իրենց տնտեսությամ մեջ, իսկ գըլ-խալոր հաշվառահներն իրենց համարում են միայն տեխնիկական աշխատողներ :

ՀԱՎԵՐ ՈՐՉՈՒԻԿԻՉԵՆ ասում է.—

«Մեր գլխավոր վարչությունների ամենալուրջ քերություններից մեկն այն է, վոր երանք հաշվապահներ չունեն, միայն տարեվերջում են զլսավոր վարչություններն իմանում, քե ինչ արդյունքներ են վել իրենց ձեռնարկությունների աշխատանիքը»:

Յեվլիրոք, բատլարար չափով հաշվային աշխատողներ չունենք վոչ միայն ստորին ողակներում, այլև կենտրոնական կազմակերպություններում, վորովհետև հաշվային կադրերի աճումը իրատ հետ և մնամ մեր սոցիալիստական տնտեսության աճումից : Ժամանակն է, վոր համապատասխան որդանները լրջորեն զբաղվեն հաշվային վրակակալ կադրերի պատրաստման գործով, վորոնք լնդունակ լինեն սոցիալիստական տնտեսության հաշվապահի թարձր և պատասխանատու կոչումը դրվու :

Դրա հետ միասին պետք է բարձրացնել գլխավոր հաշվապահների հեղինակությունը և, ինչպես ասում են ընկի. ՈՐՉՈՒՆԻԿԻՑԵՆ, «Հաշվապահն տալ իր արժանի տեղը, վորը մինչև այժմ նա չի ունեցել»:

Զայած մատնամշված թերություններին, այս
նուամենայնիվ մենք վերջին տարիների ընթացքում
տնտեսության մեջ հաշվառումը բարձր աստիճանի
յենք հասցերել։ Մենք մի շարք տնտեսական որգան-
ություններ, յորոնց մոտ հայմանական գործը շատ

Ֆարղին ե, հաշվեկշիռները տրվում են ժամանակին: Մենք հաշվային հիանալի աշխատողների մեծ կալմունենք, վորոնք համառորեն պայքարում են հաշվառման դորձը լավ կաղմանակերպելու համար:

Այդ կենդանի մարդիկ հտկայական ոգնություն
ցույց տվին մեր տնտեսությանը, հանդիսանալով
իրենց տնտեսությունների դիրեկտորների աջ ձեռքի:

մինանտական տնտեսության կազմակերպման
հիմնական որինակով նրանք մեծ հեղինակություն են
նվաճել իրենց ձեռնարկություններում :

Կուսակիցությունը և կառավարությունը խիստ դիրեկտիվ են տվել՝ հաշվապահի դերը բարձրացնել մինչև «հաշվառման ինժեների» բարձր կոչմանը. մենք պարտավոր ենք այդ դիրեկտիվը կրանքում կենսագործել: Հարկավոր ե, ամենից առաջ, մեկ անգամ ընդմիշտ վերջ տալ հաշվապահների իրավունքների անտեսմանը և հաշվային կադրերի հոսունությանը, վորպեսզի հնարանվոր լինի սոցիալիստական անտեսության հաշվապահությունը դնել նոր, ավելի բարձրը. մակարդակի վրա:

ԱՊՐԱՆՔԱՅՉԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐԿԱՎՈՐԵ- ԼՈՒ ՍԻՍՏԵՄԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՏԱՐԵՒԹՅՈՒՆԻ ԽՈՐԴԻՔԻ
ՎՈՐՈՇՈՎՄԸ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՏԱՐԵՒԹՅՈՒՆԻ ԽՈՐԴՈՒԹԸ
ՎՈՐՈՇՈՎՄԸ Ե՝

1. Վերացնել վարկավորման գոյություն ունեցող
այն կարգը, վորով Պետական բանկն առելտրական
կազմակերպություններին վարկավորում և բոլոր ապ-
րանքների շրջանառության դիմադրութիւնի ժամ-
կետով։

Սահմանել, վոր Պետական բանկն առելտրական
կազմակերպություններին վարկավորում և ակցեալտր
յենթարկված հաշիվներով, տարբեր ժամկետներով,
նայած զանազան շրջաններում ապրանքների զանազան
խմբերի համար սահմանված շրջանառության պետական
պլանին։

Սուելտրական կազմակերպությունների վարկա-
վորման չերտավորված ժամկետները յուրաքանչյուր
յեռամսյակին հաստատվում են Աշխատանքի ու
Պաշտպանության Խորհրդի կողմից, պլանները հաս-
տատելիս։

2. Վերացնել այն կարգը, վորով վարկավորման

հաստատուն լիմիտներ են սահմանված յուրաքանչյուր
առելտրական կազմակերպության համար։

Առելտրական կազմակերպությունների վարկա-
վորման ընդհանուրը չափը սահմանում է Աշխատան-
քի ու Պաշտպանության Խորհրդութը յուրաքանչյուր
յեռամսյակին՝ ամբողջ Պետական բանկի համար։ Պե-
տական բանկի վարչությունը սահմանում է առելտր-
րական կազմակերպություններին վարկավորելու չա-
փը հանրապետական, յերկրային ու մարզային գրա-
սենյակների համար, իսկ վերջիններս՝ շրջանային բա-
ժանմունքների համար։

Այն գեպքում, յերբ Պետական բանկի շրջանային
բաժանմունքն առելտրական կազմակերպությունների
համար լրացուցիչ վարկի կարիք ունենա, վարկին ա-
վելացնելու հարցը լուծում և Պետական բանկի համա-
պատասխան գրասենյակը, իսկ ամբողջ հանրապետու-
թյան, յերկրի կամ մարզի առելտրական կազմակեր-
պությունների համար լրացուցիչ վարկ պահանջելու
դեպքում՝ վարկին ավելացնելու հարցը լուծում և Պե-
տական բանկի վարչությունը։

Ծանոթություն. — Պահպանել այն կարգը,
վորով վարկավորվում են սեղոնային պաշտպաները
և առելտրական կազմակերպությունների կողմից
ժամկետից առաջ բերված առլրանքները։

3. Սահմանել, վոր Պետական բանկն առելտրա-
կան կազմակերպություններին վարկավորում և այն
դեպքում, յերբ նրանք պահպանում են հետեւյալ պայ-
մանները։

ա) առելտրական աշխատանքի չահաբերությու-

սահմանը լուս է ըստ յեռամսյակային հաշ-
նը, վրբը սահմանը լուս է ըստ յեռամսյակային հաշ-

Առաջարկել Պետական բանկին՝ այն դեպքում,
յերբ առելտրական կազմակերպությունները կատա-
րել են իրենց համար սահմանված ապրանքաշնա-
ռության պլանները, արտապլանային ընջանառու-
թյունը վարկավորել ամբողջովին, առանց նկատի առ
նելու առելտրական կազմակերպությունների սեփա-
կան միջների մասնակցությունն ապրանքների ար-
ժեքի հատուցմանը:

4. Հանձնարարել Պետքանկի վարչությանը՝ առևտության կազմակերպությունների վարկավորման ռեստրակտան կազմակերպությունների վարկավորման այն կարգը, վորը հեշտակված է 1-3 հոգվածներում, 1936 թ. ողուատ. 1-ից կիրառել Պետական բանրում, 1936 թ. ողուատ. 1-ից կիրառել Պետական բանրում 500 գրասենյակների ու բաժանմունքների համար (ապրանքաշաղանառության առնալադն յերկու յերրորդ մասն ընդգրկող), 1936 թվականի հոկտեմբերի 1-ից՝ Պետական բանկի 1500 գրասենյակների ու բաժանմունքների համար, 1937 թ. հունվարի 1-ից՝ Պետական բանրի համար սիստեմի համար:

5. Յերկարածգել մինչև 1937 թ. հունվարի 1-ը
Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդի 1936 թ.
փետրվարի 17-ի № 78 վորոշման այն մասը, վորոշ

Պետական բանկն սպառողական ընկերությունների շրջանային միությունների միջոցով պետք ե վարկավորի այն գյուղական սպառույններն ու գյուղական խանութները, վորոնց իրավունք չի տրված անմիջականութեն վարկ ստանալ Բանկից:

6. Վերացնել հաշիվները 48 ժամից հասուցելու
կարգը:

Ապրանքների արժեքը հատուցելու համար սահմանել հետևյալ վերջնական ժամկետը.

ա) այլաքաղաքային ըրջանառության համար 10
որ՝ բանկի կողմից հաշվը (վճարման պահանջման ստանալուց հետո, ներառյալ յերեք որ՝ հաշվի (վճարման պահանջը) ակցեպտի յենթարկելու համար :

բ) ներքին քաղաքային շրջանառության համար
4 որ՝ Բանկի կողմից հաշիվը ներկայացվելուց հետո
(1000 ռուբլուց ավելի դումար պարունակող հաշիվ-
ների համար) :

1936 թ. հոկտեմբերից Մոսկվայում և Լենինգրած պում այլաքաղաքային շրջանառության ասպարիգում ավելի քան 1000 ռուբլու գումար պարունակող հաշիվների (վճարման պահանջների) համար մտցնել վճարման ու վարկավորման այն կարգը, վորու սահմանված ե այլաքաղաքային շրջանառության համար, այն հաշվով, վոր մատակարարները Պետական բանկին ներկայացնեն գնորդի ընդունած (ակցեպտած) հաշիվները (վճարման պահանջները):

7. Պահպանել այն կարգը, վլորով հաշիվ ե տես-
նըլում հաջահատիկային մթերքների, հացահատիկա-

յին ողու , նավթամթերքների համար և բյուջետային
ու հասարակական կազմակերպությունների մատակա-
րարությունների համար , ինչպես և այն կարգը , վորով-
արտադրական ձեռնարկությունները հաշիվ են տես-
նում համապատասխան վաճառահանման այն կազմա-
կերպությունների հետ , վորոնց միջոցով իրացնում են
իրենց արտադրանքը :

8. Պարտավորեցնել Պետական բանկին, ապրանք-
ների ու սպասարկությունների արժեքը վճարելու
ժամկետների յերկարածզման համաձայն, յերկարա-
ծչպես մատակարարող անհետական որդաններին վար-
կավորելու ժամկետները և կրծառել գնորդ տնտեսա-
կան որդանների վարկավորելու ժամկետները, թե
այլաքաղաքականին և թե ներքաղաքային ըջանառու-
թյան համար:

9. 1936 թվականի հունիսի 1-ից 4 տոկոսից 2 տոկոսի իջեցնել ճանապարհում դանվող գումարի վարկավորման տոկոսային գույքը:

10. Ի վորփախումն ԽՍՀՄ Ժողովրդական Խոժի-
ասքների Խորհրդի 1931 թ. ոգոստոսի 17-ի վրոշ-
ման՝ «Զատուցված բեները պահպանելու համար
գնորդների ունեցած պատասխանառվության մասին»
գնորդների ունեցած պատասխանառվության
(ԽՍՀՄ Միության Որենքների Ժողովածու, 1931 թ.
№ 58, չորրեց 243). սահմանել, վոր գնորդի կողմից
ապրանքի ողտագործումը թույլատրվում է հաշվին
ակցեպտելու պահից :

Պետական բանկին իրավունք և փերապահվում
այն գնորդների վրա, վորոնք չեն հատուցում ակ-
ցելով վաճիկները (փարման սպահանջները), պա-

տասխանատովություն . զնել ապրանքը պահելու համար , կամ մատակարաների ցուցումով այդ ապրանքն ուղարկել այլ գնորդների հասցեյով :

11. Սահմանել, վոր այն դեպքում, յերբ Պետական բանկին իր բաժանմունքից տեղեկություն չետացել, թե գնորդը հրաժարվել է հաշվին ընդունելուց կամ գնորդը փող չունի, բանկը կարող է ճանապարհի գումարների դիմաց տրված վարկը գանձել՝ գնորդից վորդը փաստորեն ստացվելուն զուգընթաց :

12. Սահմանել, վոր Պետական բանկի բաժանմունքները կարող են վարկավորում ից հանել ձեռնարկություններն ու կազմակերպությունները հետայր կերպ՝

ա) միութենական որդաններին յենթակա ձեռնարկ կությունների ու կազմակերպությունների նկատմամբ՝ Պետական բանկի վարչության նախագահի թուլացմությամբ, համապատասխան ժողովրդական կոմիտարի կողմից դրա մասին բաներին հաղորդվելուց 5 ու հետո,

բ) Հանրապետական ու տեղական որդաններին յենթակա ձեռնարկությունների ու կազմակերպությունների նկատմամբ՝ Պետական բանկի համապատասխան գրասենյակի կառավարչի թույլատությամբ 5 որ անցայն որից, յերբ բանկը դրա մասին հաղորդում է այն որդաններին, վերոնց գերատեսչության տակ են գտնվում այդ ձեռնարկությունները կամ կազմակերպությունները :

13. Այս վորոշմամբ սահմանված վերլիափոման ու



Հաշվետեսի կարգը մացնել 1936թ. ողոստոսի 1-ից ։
բացի այն ժամկետներից, զորոնք մատնանշված են
4-րդ և 6-րդ հոդվածներում։

Պարտավորեցնել Պետական բանկին՝ համաձայնու-
թյան գալով ԽՍՀՄ ֆինանսների ժողովրդական կոմի-
սարիատի և մյուս շահագույնութած ժողովրդական կո-
միսարիատների հետ մինչև 1936 թ. հունիսի 10-ը մշակել
և Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդին ներկա-
յացնել ի հաստատություն մի հրահանդ՝ այս վորոշու-
մըն իրագործելու համար։

ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների Խորհրդի նա-
խագահ՝ վ. ՄՈԼՈՏՈՎ,

ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների Խորհրդի գոր-
ծերի կառավարիչ՝ ի. ՄԻՐՈՇՆԻԿՈՎ,

Մոսկվա—Կրեմլ

ՀՀ Ազգային գրադարան



NL0226491

ԳԻՒԾ 60 ԿԱՊ.

507

54.957

Боевые задачи советской торговли
Гиз. ССР Армении, Эривань, 1936 г.